



ՆՈՐ ՎԱՐԴԱՆԱՆՔ

«Վարդանանք» հանճարեղ ժամանակագրություն, «Վարդանանք» դարակամիկ պատմավեպ, «Վարդանանք» հայրենասիրական դրամա և հրաբուրբոք ներկայացումներ և, ահա «Վարդանանք» վեհ վիթխարի գորգանկար, ՍՍՀՄ կերպարվեստի ակադեմիայի իսկական անդամ, նկարիչ Գրիգոր Խանջյանի նոր ստեղծագործությունը: Գորգ-հուշարձանի գաղափարը մտահղացել է Ամենայն Հայոց Վապգեն Ա Հայրապետի լուսավոր, բավմաբեղուն միտքը, իսկ անհրաժեշտ նյութական զոհողությունը, որ պատկառելի է, սիրահոծար հանձն են առել բարեստոհմիկ, հայրենասեր բարերարներ՝ տեր և տիկին Մելանգատուն և Վիոլետա Արսլանյանները Բելգիայից: Ֆրանսիացի անվանի վարպետները Օբյուսուն քաղաքում իրենց երկրի ամենաընտիր բուրդ ու մետաքսից և տարիների տքնաջան աշխատանքով գոյության կոչեցին հայոց նոր «Վարդանանքը»:

*
* *

Նկարիչների տան ցուցասրահը՝ արվեստի այս տաճարը, հանճարի ու գեղեցկության հաղթանակներ, տոն-խրախճանքներ շատ է տեսել, բայց այսպիսին՝ ես չեմ հիշում.....: Բացման օրը և, հետագա շատ ու շատ օրեր, ժողովուրդը իր բոլոր խավերով, բոլոր հասակներով և անընդմեջ հոսանքով լցվում-վարարում էր ցուցասրահում, միջանցքներում, մուտքի առաջ ու կից հրապարակում՝ ստեղծելով համընդհանուր ոգևորության մի հավվադեպ մըթնություն: Եվ ահա թե ինչու:

Մեր կերպարվեստի դարավոր պատմության մեջ առաջին անգամ Գրիգոր Խանջյանին էր հաջողվել ամբողջ հայ ժողովրդին, իր բոլոր դաս ու դասակարգերով՝ իշխան ու պինվոր, կրոնավոր ու մտավորական, արհեստավոր, առևտրական ու շինական, տղայք, ծերեր և, «Ուխտյալ» կանաք, ի մի հավաքել այս վիթխարի կտավի «Ավարայրում» և միակամ ու վճռական՝ տանել «Իմացյալ մահով» մահը հաղթելու, ազատ ապրելու սրբազան պատերազմի: Խորապնին նայելով կտավին ես հասկացա, որ այս երթը անվերջ է. դրան մասնակցում են ոչ միայն 451 թվականի, այլև մեր պատմության բոլոր դարերի բոլոր սերունդները՝ Ավարայրից-Սարդարապատ, Վարդանից մինչև Խրիմյան, Աբովյան, Կոմիտաս, Անդրանիկ, Վարուժան, Չարենց, Սևակ և ինքը՝ նկարիչը, իր տոհմի երեք սերունդներով՝ Երվակացի հորից մինչև Երևանցի իր որդին... ու մի փոքր էլ խորանալով հասկացա նաև, որ այս երթը հրամայող-

կարգադրող չունի՝ հակառակ կտավի վերին կենտրոնը գրավել Վարդանի ձիավոր կերպարին, որ այդ հրամանը գալիս է ամեն մեկի վիրավորված ազգային ինքնասիրությունից, ազատ ապրելու, պատվով տնելու ներքին մղումից...:

Երրորդ օրը, երբ երրորդ անգամ մտա խռոնամբոխ ցուցադրահը և աչքերիս առջև նորից բացվեց վիթխարի «Ավարայրը» հաղթանակի վճռակա-նություն ճառագայթող կերպարների անհաշվելի բազմությամբ և նկարի վերին հորիզոնը փակող թշնամական բանակի գորշության մեջ գրոհող լույսի անկասելի հեղեղով, իմ մեջ հանկարծակի հստակվեց, բյուրեղացավ այն զգացողությունը, թե **Ավարայրը հավերժող հաղթանակ է...**

Այս տպավորությունը արդյո՞ք իմ հուլական խռոնվածքի արձագանքը չէր, արդյո՞ք չէի սխալվում: Սրահի մի ակյունում առանձնացած՝ նայում եմ մարդկանց, հետևում նրանց արտահայտություններին, ապրումներին և համոզվում, որ այդ տպավորությունը ընդհանուր է: Ներկաների մեջ նշանավոր ծանոթներ կային՝ գրողներ, արվեստագետներ, գիտնականներ: Կային և բանվորներ, դպրոցականներ, գյուղերից եկած հողի մարդիկ՝ բոլորն էլ հավասարապես ինքնամոփոփ, ներշնչված ու երջանիկ: Եվ այդ չէ՝ պատճառը, որ արտասովոր շատ են այսօր «Տպավորությունների թերթիկների» վրա հակված գլուխները: Ի՞նչ կա վարմանալու, արդեն սովորույթ է, որ ցուցահանդեսը դիտելուց հետո մարդիկ գրեն իրենց տպավորությունների մասին, զգացածի ու մտածածի մասին, մանավանդ որ գրողներ են, մտավորականներ:

Բայց ահա և վարմանալին: Գուրգենն է՝ իմ հին սաներից մեկը, սովորական մի աշակերտ, որ ոչնչով աչքի չէր ընկնում. ավելին՝ նա այն աշակերտներից էր, որոնց համար երկու տող շարադրելը տառապասք էր: Տեսավ ինձ, մոտեցավ ու ... գրիչ խնդրեց: Ականջներին չէի հավատում: Գրի՛չ: Եվ ինչի՞՝ համար: Նկատեց վարմանքս ու՝

— Տպավորությունս պիտի գրեմ,—ասաց վճռական:

Տվի գրիչը ու շուռ եկա, որ չխանգարեմ: Թուղթը պատին դեմ արած՝ չգիտեմ ինչ գրեց: Երբ վերադարձնում էր գրիչս, ասաց.

— Դուք էլ գրեցեք, խնդրում եմ...

Նայեցի աչքերին և հասկացա, թե ինչու էր խնդրում: Տպավորությունը ցնցող էր. իսկ իր գրածը: Կարողացավ արդյոք արտահայտել ան, ինչ զգում էր:

Եվ, հաղթահարելով պարտադիր նրբանկատությունը, հարցնում եմ.

— Գուրգեն, սիրելիս, թույլ տուր իմանալ, թե դու ինչի մասին գրեցիր:

— Ավարայրի ճակատամարտի պատմությունը ինձ վրա միշտ առասպելի ու հանելուկի տպավորություն է թողել: Ինձ մանավանդ չէր համոզում ջախջախված-նահատակված բանակի «Բարոյական հաղթանակի» առասպելը: Բայց վարմանալի է, դիտելով Գրիգոր Նանջյանի այս ստեղծագործությունը, կարծես կախարդվեցի ու միանգամից, ինքնաբերաբար համոզվեցի, որ Ավարայրը առասպել չէ, այլ ստույգ պատմություն, իսկ հաղթանակը, տեսե՛ք, բազում սերունդների այս միակամ ու անկասելի երթով երաշխավորված ճշմարտություն:

Հիմա մեկ ուրիշն էր ձևակերպում իր տպավորությունները: Երկրորդ անգամ հաղթահարելով անհարմարության զգացումը մի քիչ մոտենում եմ և նրա ուսի վրայով կարդում. «Աստվածընտիր Հայրապետ, մեծատաղանդ նկարիչ և բարետոհմիկ նվիրատուներ, արվեստի այս նոր, անանց գուլգործոցով մեզ՝ առօրյա հոգս ու տաղտուկի մեջ իրարից կարծես մի քիչ սառած, օտա-

րացած հայերիս, հարավատության, նույն ոգին ու նույն երակը ունենալու
 զգացողությամբ հարստացրիք: Համոզված եմ, որ բոլոր նրանք, որ տեսան-
 խոկացին-ապրեցին «Վարդանանքը», մտածում-զգում են մի՛ նույն բանը,
 մի՛ նույն ձևով: Թանկագին այս զգացողության համար նորից ու վերստին
 շնորհակալություն Ձեզ:

Ու մտածում եմ, ո՞ր հայը ի Հայաստան, թե ի սփյուռք աշխարհի սիրով
 ու երախտագիտությամբ չէր կրկնի նույնը՝

Շնորհակալություն:

ՍԱՐԳԻՍ ՅԱՓՈՒՋՅԱՆ

